ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՀԱՅԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Նախկին ԽՍՀՄի պաշտպանութեան համակարգի «փակ» կարգավիճակն այսօր կասկածի տակ է դրուում։ Բանն այն է, որ անկախութիւն հռչակած նախկին հանրապետութիւնները կենտրոնից պահանջում են իրենց մասնաբաժինը։ Եւ հետաքրքրականն այն է, որ ամեն մի հանրապետութեան կողմից այդ խնդրի նկատմամբ ցուցաբերուող եւ՝ մօտեցումը, եւ՝ լուծումը իւրովի է։ Օրինակ, Ուկրաինայի Գերագոյն Խորհուրդը որոշում է ընդունել 420 հազարանոց սեփական բանակ ստեղծելու մասին, որի մէջ մտնում է Ղրիմի ռազմածովային նաւատորմը։ Նա հրաժարւում է իր տարածքում գտնուող միջուկային զէնքի բոլոր տեսակներից եւ իրեն յայտարարում որպէս միջուկազերծ գօտի։ Սակայն համաձայն լինելով ստրատեգիական եւ միջուկային զէնքերի միասնական կառավարման առաջարկին, Ուկրաինան ձգտում է որպէս անկախ պետութիւն իրաւահաւասար պայմաններում մասնակցել դրանց կրճատման համար տարուող ԱՄՆի եւ ԽՍՀՄի բանակցութիւններին։ Մասնաւորապէս, ըստ Ուկրաինայի արտաքին գործոց նախարար Ա. Զելենկոյի յայտարարութեան, հանրապետութեան տարածքում վերացուելու են 176 ստրատեգիական միջուկային մարտագլխիկներից 130ը։

Այսուհանդերձ Արեւմուտքում ԽՍՀՄ գլխաւոր պարտնյորները մտահոգուած են «միջուկային ակումբի» կազմի թէկուզեւ ժամանակաւոր ընդլայնման հնարաւորութեամբ։ Նրանք յոյս են յայտնում, որ Ուկրաինան հարազատ կը մնայ պետական ինքիշխանութեան մասին հռչակագրին, որտեղ ընդգծւում է ապագայ պետութեան մտադրութիւնը առաջիկայում դառնալ չեզոք եւ հարազատ մնալ ոչ միջուկային երեք սկզբունքներին՝ չընդունել, չարտադրել եւ ձեռք չբերել միջուկային զէնք։

Այդ հարցի նկատմամբ խորամանկ վերաբերմունք ունի Ադրբեջանը, որի Գերագոյն Խորհուրդը համապատասխան որոշումով իր տարածքում գտնուող խորհրդային բոլոր զինատեսակներն ու զինամթերքը յայտարարել է իր հանրապետութեան սեփականութիւնը։ Ըստ էութեան, Ադրբեջանում տեղի է ունենում 4րդ բանակի «ազգայնացման» գործընթաց։ Նմանօրինակ ձեռնարկութիւնների սլաքն անկասկած ուղղուած է, նախ եւ առաջ Արցախի եւ Հայաստանի դէմ։ Այս մասին բազմիցս ուղղակիօրէն յայտարարել են Ադրբեջանի թէ՛ պաշտօնական շրջանները, եւ թէ՛ Աժձի ղեկավարները։

Չնայած նման «վճռականութեամբ» հանդէս են եկել առայժմ Ուկրաինան եւ Ադրբեջանը, բայց չի բացառւում, որ մօտ ապագայում նոյնպիսի յայտարարութիւններով ու որոշումներով հանդէս կը գան նաեւ միւս հանրապետութիւնները։ Փաստօրէն անկախ հանրապետութիւններում գտնուող առայժմ ամբողջական խորհրդային բանակի համապատասխան հատուածների «ազգայնացման» միտումը առկայ է։ Դժուար է ասել, թէ վաղն այս միտումը կը զարգանա՞յ, թէ՞ կը սահմանափակուի։ Բայց արժէ նշել, որ նախկին կենտրոնի այսօրուայ խորհրդանիշը՝ Գորբաչովը, ԽՍՀՄ նոր ձեւաւորուած Գերագոյն Խորհրդի Հանրապետութիւնների պալատի եւ Միութեան պալատի համատեղ նիստում «մեղմ» վճռականութեամբ նախազգուշացում-յայտարարութիւն արեց, այն է. «Նման փորձերը լուրջ չեն եւ հակաօրինական են։ Եւ եթէ այս դէպքերը շարունակւեն, ձեռք կ'առնուի սահմանադրական բնոյթի միջոցներ»։ Ինչպէս տեսնում ենք, նախկին կենտրոնի եւ հանրապետութիւնների միջեւ տարբեր ոլորտներին վերաբերող ընդունուած օրէնքների ու որոշումների առճակատումը դեռեւս շարունակւում է։

Եւ չնայած դրան ԽՍՀՄ նախագահ Գորբաչովը նպատակայարմար է գտնում Ադրբեջանի նախագահ Մութալիբովի հետ միասին ներկայ գտնուել Նիզամու ծննդեան 850 ամեակի կապակցութեամբ Մոսկուայում տեղի ունեցած հանդիսութիւններին։ Չլինի այնպէս, որ Նիզամու այսօրուայ երկրպագուները նման ներկայութիւնը յանկարծ դիտեն իրենց որոշումները «չնկատելու» մի կարեւոր քայլ։

Սակայն յուսանք, որ մի այնպիսի ոլորտ, ինչպիսին ռազմականն է, չի դառնայ քաղաքական առուծախի ասպարէզ։